Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-492-17.01.2023-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կրթության մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 1.4-րդ կետում «ուսուցման» բառից հետո լրացնել «***այդ թվում՝*** արտադպրոցական» բառերը:

2. 3. 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.2-րդ կետով՝

«**3.2) արտադպրոցական *ծրագիր՝ երեխաների հետաքրքրությունները, նախասիրությունները, կարողունակությունները, ինտելեկտուալ զարգացման մակարդակը, ստեղծարար հմտությունները, ֆիզիկական ունակությունները, մարդկային կապիտալը զարգացնող ու կատարելագործող, ֆորմալ (հիմնական) կրթական ծրագիրը լրացնող ուսուցման ծրագիր.***

3. 15-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 15.1-ին կետով՝

«**15.1.) արտադպրոցական *կազմակերպություն, կենտրոն՝*** իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում է, որն իրականացնում է ***արտադպրոցական ծրագիր***:»:

Հոդված 2. Օրենքի 13-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի 5-րդ կետից հանել ***«դաստիարակության»*** բառերը:

Հոդված 3. Օրենքի 20-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 20. Արտադպրոցական կրթությունը**

1. Արտադպրոցական կրթության նպատակն է ***զարգացնել երեխաների սոցիալական, ինքնասպասարկման և ինտելեկտուալ հմտությունները, ձևավորել ու զարգացնել անձի՝ որպես քաղաքացու, արժեհամակարգը, բազմաֆունկցիոնալ կարողություններն ու փափուկ հմտությունները, նպաստել հոգևոր, գեղագիտական,***

ֆիզիկական, ռազմահայրենասիրական, տեխնիկական, բնապահպանական գիտելիքների ձեռքբերմանը և նախամասնագիտական կողմնորոշմանը՝ նպաստելով մարդկային կապիտալի զարգացմանը:

2. ***Պետությունը երաշխավորում է արտադպրոցական կրթության ու դաստիարակության համակարգի ստեղծումը և գործունեությանը, ապահովում է առանձին ուղղություններով արտադպրոցական ծրագրերի իրականացման ու ծառայությունների տրամադրման հավասար հնարավորությունը՝ ի նպաստ երեխայի լավագույն շահի:***

3. ***Արտադպրոցական ծրագրերը կարող են սահմանվել մշակույթի և արվեստի, տեխնիկական, հումանիտար, հասարակագիտական և բնագիտական, սպորտային և մարզական, ճանաչողական և բնապահպանական, ոլորտային հետազոտական, արշավային, զբոսաշրջային ուղղություններով:***

4. ***Արտադպրոցական ծրագրերը կարող են իրականացվել արտադպրոցական կազմակերպություններում, մշակութային կազմակերպություններում, կենտրոններում, ակումբներում, ճամբարներում, ինչպես նաև արշավներ, զբոսաշրջություն կազմակերպող, բնապահպանական արտադպրոցական ծրագիր իրականացնող կազմակերպություններում:***

5. Արտադպրոցական ծրագրեր իրականացնող, ինչպես նաև մանկավարժական աշխատողին ներկայացվող պահանջները բավարարող անձիք կարող են իրենց նախաձեռնությամբ մասնակցել տվյալ ուղղությամբ ***սահմանված*** գիտելիքների իմացության և ***կարողությունների տիրապետման*** աստիճանի գնահատմանն ուղղված կամավոր ատեստավորման:

6. ***Ատեստավորման դրական արդյունք հիմք է արտադպրոցական կազմակերպությունների ու կենտրոնների մանկավարժական աշխատողների նկատմամբ լրավճար սահմանելու համար:***

7. ***Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ուղղություններով արտադպրոցական ծրագրերը երաշխավորում է կրթության պետական կառավարման լիազոր մարմինը***:»:

Հոդված 4. Օրենքի 36-րդ հոդվածի՝

1. 5-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-ին կետով՝

«5.1.) հաստատում է պետական արտադպրոցական կազմակերպությունների, կենտրոնների օրինակելի կանոնադրությունները.»:

2. 6-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6.3-րդ, 6.4-րդ և 6.5-րդ կետերով՝

«6.3.) սահմանում է ***պետական կամ համայնքային կազմակերպությունների արտադպրոցական ծրագրեր իրականացնող*** մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ***լրավճարի տրամադրման*** կարգը.

6.4.) սահմանում է ***արտադպրոցական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների և կենտրոնների*** մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկն ու դրանց նկարագրերը.

6.5.) սահմանում է ***պետական և համայնքային արտադպրոցական կազմակերպությունների և կենտրոնների՝*** պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները և մեթոդաբանությունը»:

Հոդված 5. Օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.1-ին, 3.2-րդ և 3.3-րդ կետերով՝

«3.1.) ***մշակում և*** հաստատում է ***արտադպրոցական ծրագրի ձևաչափը և վերջնարդյունքները՝ ըստ սահմանված ուղղությունների.***

3.2.) ***հաստատում է արտադպրոցական կազմակերպությունների և կենտրոնների ներկայացրած արտադպրոցական ծրագրերի երաշխավորման կարգը.***

3.3.) հաստատում է ***արտադպրոցական կազմակերպությունների, կենտրոնների՝*** Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը.»:

Հոդված 6. Անցումային դրույթներ

1.Սույն օրենքի 4-րդ հոդվածով և 5-րդ հոդվածով լրացվող 3.2-րդ և 3.3-րդ կետերով նախատեսված ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունման ժամկետ սահմանել սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո՝ 6-ամսյա ժամկետում, իսկ 5-րդ հոդվածով լրացվող

3.1-ին կետով նախատեսված ենթաօրենսդրական իրավական ակտի ընդունման ժամկետ սահմանել սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո՝ 12-ամսյա ժամկետում:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

~~ՆԱԽԱԳԻԾ~~Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կրթության մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 1.4-։ ։ ։ ։ ։ ։ ։ «ուսուցման» բառից հետո լրացնել «այդ թվում՝ արտադպրոցական ~~կրթադաստիարակչական~~» բառերը:

2. 3.1-։ ։ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.2-րդ կետով՝

«3.2) **արտադպրոցական ~~կրթադաստիարակչական~~ ծրագիր՝** երեխաների ~~որն ուղղված է~~հետաքրքրությունները, նախասիրությունները, կարողունակությունները, ինտելեկտուալ զարգացման մակարդակը, ստեղծարար հմտությունները, ֆիզիկական ունակությունները, մարդկային կապիտալը զարգացնող ու կատարելագործող, ֆորմալ (հիմնական) կրթական ծրագիրը լրացնող ուսուցման ծրագրիր. ~~սովորողների հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը, ռազմահայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձեռքբերմանը, սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացմանը:»:~~

3. 15-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 15.1-ին կետով՝

«**15.1.) արտադպրոցական ~~ուսումնական հաստատություն~~կազմակերպություն, կենտրոն՝** իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որն իրականացնում է արտադպրոցական ~~կրթադաստիարակչական~~ ծրագիր:»:

Հոդված 2. Օրենքի 13-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի 5-րդ կետից հանել «~~, այդ թվում՝ արտադպրոցական~~ դաստիարակության» բառերը:

~~2. 1-ին մասի 5-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-ին կետով՝ «5.1.) արտադպրոցական կրթության և դաստիարակության.»:~~

Հոդված 3. Օրենքի 20-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 20. Արտադպրոցական կրթություն ~~և դաստիարակություն~~

1. Արտադպրոցական կրթության ~~և դաստիարակության~~ նպատակն է զարգացնել, երեխաների սոցիալական, ինքնասպասարկման և ինտելեկտուալ հմտությունները, ձևավորել ու զարգացնել անձի՝ որպես քաղաքացու, արժեհամակարգը, բազմաֆունկցիոնալ կարողություններն ու փափուկ հմտությունները, նպաստել հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական, ռազմահայրենասիրական, տեխնիկական, բնապահպանական գիտելիքների ձեռքբերմանը և նախամասնագիտական ~~ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է, և նպատակաուղղված է նրանց հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը, ռազմահայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձեռքբերմանը:~~սոցիալական, ինքնասպասարկման և ինտելեկտուալ հմտությունները, ~~ձևավորել ու զարգացնել անձի քաղաքացու արժեհամակարգը, բազմաֆունկցիոնալ կարողություններն ու փափուկ հմտությունները, նպաստել նախամասնագիտական~~ կողմնորոշմանը՝ նպաստելով մարդկային կապիտալի զարգացմանը:

2. Պետությունը երաշխավորում է արտադպրոցական կրթության ու դաստիարակության համակարգի ստեղծումը և գործունեությանը, ապահովում է առանձին ուղղություններով արտադպրոցական ծրագրերի իրականացման ու ծառայությունների տրամադրման հավասար հնարավորությունները՝ ի նպաստ երեխայի լավագույն շահերի:

3. Արտադպրոցական ծրագրերը կարող են սահմանվել մշակույթի և արվեստի, տեխնիկական, հումանիտար, հասարակագիտական և բնագիտական, սպորտային և մարզական, ճանաչողական և բնապահպանական, ոլորտային հետազոտական, արշավային, զբոսաշրջային ուղղություններով:

Արտադպրոցական ծրագրերը կարող են իրականացվել արտադպրոցական կազմակերպություններում, մշակութային կազմակերպություններում, կենտրոններում, ակումբներում, ճամբարներում, ինչպես նաև արշավներ, զբոսաշրջություն կազմակերպող, բնապահպանական արտադպրոցական ծրագիր իրականացնող կազմակերպություններում:~~դաստիարակությունն իրականացվում է~~

մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, երաժշտական, արվեստի, գեղարվեստի, պարարվեստի, նկարչական դպրոցների, տեխնիկների պատրաստման արշավների, զբոսաշրջության կազմակերպման, բնապահպանական կազմակերպությունների (անկախ կազմակերպական իրավական ձևից), ճամբարների, մարզադպրոցների, հայորդաց տների և արտադպրոցական կրթություն և դաստիարակություն իրականացնող այլ կազմակերպությունների միջոցով:

1.4. Արտադպրոցական կրթադաստիարակչական գործառույթն իրականացնո մանկավարաժական աշխատողներ, որոնց պաշտոնների անվանացանկն ու նկարագրերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Արտադպրոցական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության արտադպրոցական կազմակերպությունների ու կենտրոնների մանկավարժական աշխատողները, ինչպես նաև մանկավարժական աշխատողին ներկայացվող պահանջները բավարարող անձիք կարող են իրենց նախաձեռնությամբ մասնակցել տվյալ ուղղությամբ սահմանված գիտելիքների իմացության և կարողությունների տիրապետման աստիճանի գնահատմանն ուղղված կամավոր ատեստավորման: և դրա արդյունքով ստանալ հավելավճար կամ լրավճար:

6. Ատեստավորման դրական արդյունք հիմք է արտադպրոցական կազմակերպությունների ու կենտրոնների մանկավարժական աշխատողների նկատմաբ լրավճար սահմանելու համար:

7. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված Արտադպրոցական ուղղություններով արտադպրոցական ծրագրերը երաշխավորում է ուսումնական հաստատությունները կրթական ծրագրերը իրականացնում են ուսումնական պլանների հիման վրա, որոնց օրինակելի ձևը հաստատում է կրթության պետական կառավարման լիազոր մարմինը:»:

Հոդված 4. Օրենքի 36-րդ հոդվածի՝

Հոդված 4. Օրենքի 36-րդ հոդվածի՝

1. 5-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-ին կետով՝

«5.1.) հաստատում է պետական արտադպրոցական ~~ուսումնական հաստատությունների~~կազմակերպությունների, կենտրոնների օրինակելի կանոնադրությունները.»:

2. 6-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6.3-րդ, 6.4-րդ և 6.5-րդ կետերով՝

«6.3.) սահմանում է պետական կամ համայնքային կազմակերպությունների արտադպրոցական ~~ուսումնական հաստատությունների~~ծրագրեր իրականացնող մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ~~հավելավճարի կամ~~ լրավճարի տրամադրման կարգը.

6.4.) սահմանում է արտադպրոցական ծրագրեր իրականացնող ~~արտադպրոցական ուսումնական հաստատությունների~~կազմակերպությունների մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկն ու դրանց նկարագրերը.

6.5.) սահմանում է պետական և համայնքային արտադպրոցական ~~ուսումնական հաստատությունների~~կազմակերպությունների և կենտրոնների՝ պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները և մեթոդաբանությունը.»:

Հոդված 5. Օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.1-ին, 3.2-րդ և 3.3-րդ կետերով՝

«3.1) հաստատում է արտադպրոցական ~~կրթադաստիարակչական և ուսումնամարզական ծրագրերն՝ ըստ ուղղությունների .~~ ծրագրերի ձևաչափը և վերջնարդյունքները՝ ըստ ուղղությունների.

3 . 2) հաստատում է ~~օրինակելի ուսումնական պլանները~~արտադպրոցական կազմակերպությունների և կենտրոնների ներկայացրած արտադպրոցական ծրագրերի երաշխավորման կարգը.

3.3.) հաստատում է արտադպրոցական ~~ուսումնական հաստատությունների~~կազմակերպությունների, կենտրոնների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը.»:

Հոդված 6. Անցումային դրույթներ

1.Սույն օրենքի 4-րդ հոդվածով և 5-րդ հոդվածով լրացվող 3"2-րդ և 3.3-րդ կետերով նախատեսված ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունման ժամկետ սահմանել սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո՝ 6-ամսյա ժամկետում, իսկ 5-րդ հոդվածով լրացվող 3.1-ին կետով նախատեսված ենթաօրենսդրական իրավական ակտի ընդունման ժամկետ սահմանել սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո՝ 12-ամսյա ժամկետում:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Կրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի (փաստաթղթային կոդ՝ Կ-492-17.01.2023-ԳԿ-011/1),

ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ Աժ պատգամավոր Լիլիթ Գալստյան	«Կրթության մասին» ՀՀ օրենքի նախագիծ 3-րդ հոդված	1.3 կետում «հանրակրթական» բառից հետո լրացնել «նախնական մասնագիտական» բառերը, իսկ «որակավորման աստիճանի»՝ բառից հետո լրացնել «վկայականի կամ դիպլոմի շնորհման» բառերը:	Չի ընդունվել: Առաջարկում ենք քննարկել «Արտադպրոցական կրթության և դաստիարակության» մասին օրենքի մշակման աշխատանքների շրջանակում:	Չի ընդունվել
			1.3) ֆորմալ կրթություն՝ հանրակրթական, նախնական մասնագիտական և մասնագիտական կրթական հիմնական ծրագրերի որոշակի մակարդակ կամ ամբողջություն, որն իրականացվում է համապատասխան ուսումնական հաստատության (հաստատությունների) կողմից և հանգեցնում տվյալ մակարդակի որակավորման աստիճանի՝ վկայականի կամ դիպլոմի շնորհման:	Չի ընդունվել: Առաջարկում ենք քննարկել «Արտադպրոցական կրթության և դաստիարակության» մասին օրենքի մշակման աշխատանքների շրջանակում:	Չի ընդունվել
		Նախագծի 1-ին հոդված, 2-րդ կետի 3.1-ին կետից հետո լրացվող 3.2-րդ կետը	շարադրել հետևյալ խմբագրությամբ. «արտադպրոցական կրթական և դաստիարակչական ծրագիր՝ մարդկային կապիտալի զարգացմանը, անձի համակողմանի՝ ազգային, համամարդկային, հոգևոր, մշակութային, քաղաքացիական և ֆիզիկական կրթությանը, դաստիարակությանն ու զարգացմանը,	Ընդունվել է մասնակի:	Ընդունվել է

			նախամասնագիտական գիտելիքների ձեռքբերմանը, կարողությունների, հմտությունների, ստեղծագործական, մտավոր ունակությունների և հետաքրքրությունների բացահայտմանը նպատակաուղղված կրթական և դաստիարակչական գործընթաց»:		
		ԿՄՕ 3-րդ հոդվածի	լրացնել հետևյալ բովանդակությամբ 17.4-րդ կետ. «17.4 վկայական՝ պետական նմուշի միասնական ավարտական փաստաթուղթ, որը տրվում է տվյալ կրթական ծրագրով սահմանված ուսումնառությունն ամբողջացրած և արդյունքներով գնահատված անձին:»:	Չի ընդունվել: Առաջարկում ենք քննարկել «Արտադպրոցական կրթության և դաստիարակության» մասին օրենքի մշակման աշխատանքների շրջանակում:	Չի ընդունվել է
			լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9.1 կետով. «9.1 մանկավարժական աշխատող՝ ֆիզիկական անձ, որը հանրակրթական, նախնական մասնագիտական և մասնագիտական ուսումնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում իրականացնում է տվյալ հաստատության ծրագրերի պահանջներին համապատասխան կրթադաստիարակչական գործունեություն:	Չի ընդունվել: Առաջարկում ենք քննարկել «Կրթության» մասին օրենսգրքի մշակման աշխատանքների շրջանակում:	Չի ընդունվել է
			7-րդ մասով նոր խբագրությամբ շարադրվող օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 14.3-րդ կետում կատարել խմբագրական փոփոխություններ:		
2	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան Կառավարություն	Նախագծի հոդված 1, մաս 2	3.2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3.2) արտադպրոցական ծրագիր՝ երեխաների հետաքրքրությունները, նախասիրությունները, կարողունակությունները, ինտելեկտուալ զարգացման մակարդակը, ստեղծարար հմտությունները, ֆիզիկական ունակությունները, մարդկային կապիտալը զարգացնող ու կատարելագործող, ֆորմալ (հիմնական) կրթական ծրագիրը լրացնող ուսուցման ծրագիր.	Ընդունվել է	Ընդունվել է
3	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի հոդված 1, մաս 3	Նոր 15.1-րդ կետը շարադրել հետևյալ խբագրությամբ «15.1.) արտադպրոցական *կազմակերպություն, կենտրոն*՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող	Ընդունվել է:	Ընդունվել է

	Կառավարություն		կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում է, որն իրականացնում է *արտադպրոցական ծրագիր*:»: Դրանով պայմանավորված նախագծի ամբողջ տեքստում «արտադպրոցական ուսումնական հաստատություններ» բառերը փոխարինել «արտադպրոցական կազմակերպություններ և կենտրոններ» բառերով.		
4	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան Կառավարություն	Նախագծի հոդ. 2, մաս 3	1. 1-ին կետի «, այդ թվում՝ արտադպրոցական դաստիարակության» բառերը փոխարինել «դաստիրակության» բառով. 2–րդ կետը հանել	Ընդունվել է:	Ընդունվել է
5	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան Կառավարություն	Նախագծի հոդ. 3,	Հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 20. Արտադպրոցական կրթությունը 1. Արտադպրոցական կրթության նպատակն է զարգացնել երեխաների սոցիալական, ինքնասպասարկման և ինտելեկտուալ հմտությունները, ձևավորել ու զարգացնել անձի՝ որպես քաղաքացու, արժեհամակարգը, բազմաֆունկցիոնալ կարողություններն ու փափուկ հմտությունները, նպաստել հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական, ռազմահայրենասիրական, տեխնիկական, բնապահպանական գիտելիքների ձեռքբերմանը և նախամասնագիտական կողմնորոշմանը՝ նպաստելով մարդկային կապիտալի զարգացմանը: 2. Պետությունը երաշխավորում է արտադպրոցական կրթության ու դաստիարակության համակարգի ստեղծումը և գործունեությանը, ապահովում է առանձին ուղղություններով արտադպրոցական ծրագրերի իրականացման ու ծառայությունների տրամադրման հավասար հնարավորությունը՝ ի նպաստ երեխայի լավագույն շահի: 3. Արտադպրոցական ծրագրերը կարող են սահմանվել մշակույթի և արվեստի, տեխնիկական, հումանիտար, հասարակագիտական և բնագիտական, սպորտային և	Ընդունվել է	Ընդունվել է

			մարզական, ճանաչողական և բնապահպանական, ոլորտային հետազոտական, արշավային, զբոսաշրջային ուղղություններով: 4. Արտադպրոցական ծրագրերը կարող են իրականացվել արտադպրոցական կազմակերպություններում, մշակութային կազմակերպություններում, կենտրոններում, ակումբներում, ճամբարներում, ինչպես նաև արշավներ, զբոսաշրջություն կազմակերպող, բնապահպանական արտադպրոցական ծրագիր իրականացնող կազմակերպություններում: 5. Արտադպրոցական ծրագրեր իրականացնող, ինչպես նաև մանկավարժական աշխատողին ներկայացվող պահանջները բավարարող անձիք կարող են իրենց նախաձեռնությամբ մասնակցել տվյալ ուղղությամբ սահմանված գիտելիքների իմացության և կարողությունների տիրապետման աստիճանի գնահատմանն ուղղված կամավոր ատեստավորման: 6. Ատեստավորման դրական արդյունք հիմք է արտադպրոցական կազմակերպությունների ու կենտրոնների մանկավարժական աշխատողների նկատմաբ լրավճար սահմանելու համար: 7. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ուղղություններով արտադպրոցական ծրագրերը երաշխավորում է կրթության պետական կառավարման լիազոր մարմինը:»:		
6	ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան	ԿՄՕ	5. Օրենքի 13-րդ հոդվածի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ուսումնական հաստատությունների տեսակները:»:	Չի ընդունվել	Չի ընդունվել է
7	ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան	ԿՄՕ	6. Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին կետում «տիպերն են» բառերը փոխարինել «տեսակներն են» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է
8	ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան	ԿՄՕ	7. Օրենքի 13-րդ հոդվածի 2.1) կետում (արհեստագործական) բառից հետո լրացնել «մշակութային, մարզական» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է

	ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին կետը	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Արտադպրոցական կրթությունն ու դաստիարակությունը իրականացվում է ընդհանուր զարգացման և նախնական մասնագիտական կրթական ծրագրերի միջոցով: Ընդհանուր զարգացման կրթական ծրագրերը նպատակաուղղված են սովորողների ազգային, հոգեւոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը, ռազմահայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական, կիրառական գիտելիքների և ունակությունների ձեռքբերմանը»:	Ընդունվել է մասնակի: Խմբագրվել է:	Ընդունվել է խմբագրությամբ
9	ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետ	«արտադպրոցական» բառից հետո ավելացնել «կրթություն և» բառերը:	Խմբագրվել է:	Ընդունվել է
10	ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան	Նախագծի 3-րդ հոդված	Ավելացնել նոր կետ հետևյալ բովանդակությամբ. «Արտադրոցական նախնական մասնագիտական կրթական ծրագրերը լինում են մշակութային և մարզական ուղղվածության: Մշակութային նախամասնագիտական կրթական ծրագրերը նպատակաուղղված են շնորհալի երեխաների բացահայտելուն, նրանց գեղագիտական դաստիարակությանը, կատարողական հմտությունների, ստեղծագործական կարողությունների զարգացմանը, մասնագիտական կրթության կողմնորոշելուն, և իրականացվում են երաժշտական, արվեստի, գեղարվեստի, պարարվեստի, նկարչական դպրոցների, ինչպես նաեւ այլ կազմակերպությունների կամ դրանց ստորաբաժանումների կողմից: Մարզական նախամասնագիտական կրթական ծրագրերը նպատակաուղղված են երեխաների ֆիզիկական դաստիարակությունը, մանկապատանեկան սպորտի և զանգվածային սպորտի ոլորտում շնորհալի երեխաների բացահայտմանը, ընտրությանը, կատարելագործմանը, օլիմպիական, մարզական հերթափոխի ապահովմանը, և իրականացվում են մասնագիտացված մարզադպրոցների կամ դրանց ստորաբաժանումների կողմից»:	Չի ընդունվել: Առաջարկում ենք քննարկել «Արտադպրոցական կրթության և դաստիարակության» մասին օրենքի մշակման աշխատանքների շրջանակում:	Չի ընդունվել
11	ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան	նախագծի 3-րդ հոդվածի 3 -րդ կետ	Հանել, քանի որ այն զետեղված է Օրենքի Հոդված 36-ում՝ Կրթության բնագավառում՝ ՀՀ կառավարության իրավասությունների ցանկում:	Ընդունվել է: Խմբագրվել է:	Ընդունվել է

12	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան Կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված, 2-րդ կետ	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. 6.3.) սահմանում է պետական կամ համայնքային կազմակերպությունների արտադպրոցական ծրագրեր իրականացնող մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրավճարի տրամադրման կարգը 6.4.) սահմանում է արտադպրոցական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկն ու դրանց նկարագրերը 6.5.) սահմանում է պետական և համայնքային արտադպրոցական կազմակերպությունների և կենտրոնների՝ պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները և մեթոդաբանությունը»:	Ընդունվել է	Ընդունվել է
13	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան Կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված, 1, 2 կետ	Շարադրել հետևյալ խմբագրությամբ . 3.1) հաստատում է արտադպրոցական ծրագրերի ձևաչափը և վերջնարդյունքները՝ ըստ ուղղությունների. 3 . 2) հաստատում է արտադպրոցական կազմակերպությունների և կենտրոնների ներկայացրած արտադպրոցական ծրագրերի երաշխավորման կարգը.	Ընդունվել է	Ընդունվել է
14	ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան	նախագծի 3-րդ հոդվածի 3 -րդ կետ	12. Օրենքի Հոդված 37-ում, Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունների ցանկում լրացնել՝ -իրականացնում է արտադպրոցական ուսումնական հաստատությունների մշտադիտարկում և տեսչական վերահսկողություն, -սահմանում է արտադպրոցական ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական ապահովության և անվտանգության նորմատիվները, -մշակում և կառավարության հաստատմանն է ներկայացնում արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների սոցիալական երաշխիքները:	Չի ընդունվել: Առաջարկում ենք քննարկել «Կրթության» մասին օրենսգրքի մշակման աշխատանքների շրջանակում:	Չի ընդունվել